

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՏԻԳՐԱՆ ՄԻՄՈՆՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

Հափշտակությունները սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հիմնական կորիզն են, դրանց առանցքը, և այս դիտանկյունից քննարկվող երևույթի հասկացության և եղանակների ուսումնասիրությունը միշտ արդիական է և կարևոր:

Սույն հոդվածի շրջանակներում հետազոտվել են ՀՀ նոր (գործող) քրեական օրենսգրքով սահմանված հափշտակության հասկացության և դրա եղանակներին առնչվող որոշ հիմնահարցեր, որոնք բավականաչափ խնդրահարույց են, իսկ դրանց լուսաբանումը, ինչպես նաև հետագա օրենսդրական փոփոխություններին միտված լրամշակման առաջարկներն անհրաժեշտ են և հրատապ:

Հոդվածի նպատակը «հափշտակություն» հասկացության, ավարտի պահի, ինչպես նաև հափշտակության եղանակների օրենսդրական ձևակերպման առկա որոշ հիմնախնդիրներ հետազոտելն է և դրա արդյունքում օրենսդրական ձևակերպումների կատարելագործմանն ուղղված և հրատապ լուծում պահանջող առաջարկներ ներկայացնելն է:

Առանձին պարագրաֆներով քննարկվում են հափշտակության հասկացությունը, դրա ընկալման որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև հափշտակության եղանակների օրենսդրական ձևակերպման և որակման խնդիրները:

Հետազոտության առարկան դիտարկվել է համագիտական և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են դոգմատիկ, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքում ներկայացվել են հափշտակության ձևակերպմանը և հափշտակության եղանակներին առնչվող օրենսդրական առաջարկներ՝ միտված դրանց վերաբերյալ քրեաիրավական նորմերի կատարելագործմանը, մասնավորապես նշվել է.

- Օրենսդրական միասնական տրամաբանության ապահովման համատեքստ

* **Տիգրան Միմոնյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ

Тигран Симомян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ

Tigran Simonyan – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Criminal Law

Էլ. փոստ՝ tsimonyan@ysu.am, tvsimonyan@gmail.com, ORCID: <https://orcid.org/0000-0001-8481-5706>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.11.2024

Գրախոսվել է՝ 17.11.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

տում հափշտակության հասկացության մեջ պետք է վերականգնվի շահադիտական դրդման վերաբերյալ նշումը, կամ ՀՀ քրեական օրենսգրքում ընդհանրապես պետք է հրաժարվել նշված դրդման վերաբերյալ զետեղումներից:

- Առաջարկվել է հափշտակությունն ավարտված համարել այն պահից, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը զրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունից:

- Նյութական և դատավարական իրավունքի նորմերում «բնակարան» հասկացության տարբերությունները խնդրահարույց են իրավակիրառ պրակտիկայի համար, հետևաբար անհրաժեշտ է այս հասկացությունը նախատեսել միայն քրեական օրենսգրքում՝ կատարելով համապատասխան լրամշակումներ:

- Առկա իրավակարգավորումների պարագայում ավագակության հանցատեսակի որակյալ դրսևորումների շարքում պետք է նախատեսել «անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով» ծանրացնող հանգամանքը:

- Կրկնաբանությունից խուսափելու նպատակով՝ կոդոպուտի օրենսդրական ձևակերպումը ևս պետք է փոփոխել՝ նշելով՝ «Կոդոպուտը՝ բացահայտ հափշտակությունը»:

- Գողության հանցակազմի որակյալ տեսակներից մեկում «օբյեկտից» եզրույթը խիստ թերի է, այն կարող է առաջ բերել տարամեկնաբանություններ և անհստակություններ: Այս համատեքստում նշված նորմն անհրաժեշտ է լրամշակել՝ նշելով՝ «տուժողի մոտ գտնվող այլ առարկայից» ձևակերպումը, շեշտելով, որ այդ պահոցը գտնվում է անմիջապես տուժողի մոտ, ամրացված է նրա մարմնին կամ հագուստին:

- Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը պետք է վերաձևակերպել՝ նշելով՝ «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է նախապես՝ մինչև հանցանքը սկսելը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածը ևս պետք է վերախմբագրել՝ նշելով՝ «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո»: Առկա հասկացությունից անհրաժեշտ է բացառել «փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով» խիստ վիճահարույց ձևակերպումը:

Բանալի բառեր – *հափշտակություն, հափշտակության հասկացություն, հափշտակության ավարտ, շահադիտական դրդում, հափշտակության եղանակներ, բնակարան, ազատ կամք, նյութական և դատավարական ձևակերպումների ներդաշնակություն*

Ներածություն

Հափշտակությունները ավանդաբար համարվում են սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հիմնական կորիզը, դրանց առանցքը, և այս դիտանկյունից քննարկվող երևույթի հասկացության և եղանակների ուսումնասիրությունը միշտ արդիական է ու կարևոր: Գիտական հոդվածի շրջանակներում չի կարող խնդիր դրվել ուսումնասիրելու հափշտակության հասկացության և դրա եղանակների հիմնարար առանձնահատկությունները կամ

քննարկելու դրանց օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի ու հատկանիշների համապարփակ ամբողջությունը, քանզի դա ակնհայտորեն դուրս է սույն ձևաչափի ծավալներից, սակայն ՀՀ նոր քրեական օրենսգրքով սահմանված հափշտակության հասկացության և դրա եղանակներին առնչվող որոշ հիմնահարցեր բավականաչափ խնդրահարույց են, իսկ դրանց լուսաբանումը, ինչպես նաև հետագա օրենսդրական փոփոխություններին միտված լրամշակման առաջարկներն անհրաժեշտ են և հրատապ: Ի մասնավորի՝ հարկ է ընդգծել, որ օրենսդրորեն սահմանված հափշտակության հասկացությունը բավականաչափ հնացած, ռեակցիոն է և չի համապատասխանում իրավունքի զարգացման արդի միտումներին ու մարտահրավերներին: Կարևոր և հրատապ փոփոխություններ են անհրաժեշտ նաև հափշտակությանը վերաբերելի օրենսդրական հասկացությունների և եզրույթների առումով: Բացի այդ, հափշտակության մի շարք եղանակների օրենսդրական նկարագրությունը ևս թերի է, ինչը կարող է հանգեցնել գործնական խնդիրների իրավակիրառ պրակտիկայում: Այս և մի շարք այլ հիմնախնդիրների քննարկմանը և դրանց լուծմանը միտված առաջարկությունների մշակմանն է նվիրված սույն գիտական հոդվածը:

I. Հափշտակության հասկացության վերաբերյալ

ՀՀ քրեական օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ նոր քրեական օրենսգրքում տրվել է հափշտակության հասկացությունը, ինչը, անշուշտ, առաջընթաց քայլ է, քանի որ թույլ է տալիս հստակորեն սահմանազատել հափշտակությունները համաբնույթ այլ հանցատեսակներից (օրինակ՝ շորթումից, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելուց և այլն)¹:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 16-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը. «Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»:

Նոր իրավակարգավորմամբ հափշտակության հասկացության մեջ ավանդաբար ներառված շահադիտական շարժառիթի մասին նշում չկա: Որպես նշվածի հիմնավորում, ի թիվս այլնի, կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ թեև հափշտակությունների գերակշիռ մասը կատարվում է շահադիտական դրդումներով, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինն է դառնում այլ շարժառիթներով, օրինակ՝ վրեժի: Սակայն տեսության մեջ բազմիցս նշվել է, որ հափշտակությունը կարող է կատարվել բացառապես շահադիտական

¹ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: Եվրոպայի խորհուրդ, 2022 թ., էջ 315:

դրդումներով, այլապես արարքը պետք է որակվի այլ հանցակազմերի հատկանիշներով, օրինակ՝ ինքնիրավության կամ գույքի ոչնչացման կամ վնասման²: Կարծում եմ, որ ՀՀ քրեական օրենսդրությամբ ամրագրված իրավակարգավորումը կարող էր նախընտրելի լինել, քանի որ հարցին անհրաժեշտ է մոտենալ տուժածի դիտանկյունից, ում համար «միևնույնն է», թե ինչ դրդապատճառներով է գործում հանցավորը, կարևորն այն է, որ անձը զրկվում է սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքներից: Միևնույն ժամանակ, արարքի շարժառիթները բարդ և բազմաշերտ են, ու տրամաբանական է, որ դրանք պետք է դուրս լինեն հափշտակության հասկացության շրջանակներից: Սակայն փաստն այն է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում ավելի քան հիստուն անգամ օգտագործվում է «շահադիտական» կամ «շահադիտական դրդում» եզրույթը, իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով տրվել է դրա հասկացությունը՝ «շահադիտական դրդում» իր կամ այլ անձի համար գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղում»:

Այս պարագայում իրավաչափ հարց է ծագում, եթե օրենսդրի կամքն ուղղված է «շահադիտական շարժառիթ» կամ «շահադիտական դրդում» բազմաբովանդակ և խրթին ապացուցելի տարրը հանցագործությունների որակման գործընթացի ծավալից դուրս բերելուն, ապա ինչու է օրենսգրքում այդքան տարածված այս եզրույթը, հակառակ պարագայում անհասկանալի է հափշտակության բուն էությունը կազմող շահադիտական դրդման դուրս մղումը դրա օրենսդրական դեֆինիցիայից: Կարելի է արձանագրել, որ խախտվել է օրենսդրական միասնական տրամաբանությունը, որպիսի պայմաններում, կարծում եմ, հափշտակության հասկացության մեջ պետք է վերականգնվի շահադիտական դրդման վերաբերյալ նշումը, կամ օրենսգրքում ընդհանրապես պետք է հրաժարվել նշված դրդման վերաբերյալ գետեղումներից՝ թողնելով դա պատժի անհատականացման գործընթացի շրջանակներում:

Օրենսդրորեն նշվել է նաև հափշտակության ավարտման պահը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում այս կանոնը մշակվել է հայտնի իրավաբան-գիտնական, պրոֆեսոր Գ.Ա. Կրիզերի կողմից և պաշտոնապես ամրագրվել է Գերագույն դատարանի Պլենումի «Պետական և հանրային ունեցվածքի գողության գործերի վերաբերյալ դատական պրակտիկայի մասին» 1972 թվականի հուլիսի 11-ի թիվ 4 որոշման 10-րդ կետով, որը հետևել

² Տե՛ս, օր., **Шеслер. А.В.** Хищения: понятия и признаки file:///C:/Users/Admin/Downloads/hischeniya-ponyatiya-i-priznaki%20(1).pdf (վերջին մուտք՝ 05.08.2024 թ.):

է կոնկրետ գործով կայացված դատական որոշմանը (ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի № 2 տեղեկագիր)³:

Հատկանշական է, որ դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ամրագրված նշյալ ժամանակավրեպ մոտեցումը կենսունակ է ճանաչվել նաև ՀՀ գործող օրենսդրությամբ, մինչդեռ, կարծում եմ, պետք է առաջնային դիտվեն անձի սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, որպիսի պայմաններում հափշտակությունը պետք է ավարտված համարվի ոչ թե այն պահից, երբ հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել, այլ այն պահից, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը զրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու հնարավորությունից, քանի որ այդ պահից սկսած վերջինիս պատճառովում է իրական գույքային վնաս: Ընդ որում՝ նշված տեսակետը պաշտպանվում է նաև մի շարք տեսական աղբյուրներում, հատկապես ՌԴ դոկտրինալ շրջանակներում, քանի որ ՌԴ օրենսդրությամբ տրված հափշտակության հասկացության մեջ որևէ նշում չկա հանցավորի կողմից գույքը սեփական հայեցողությամբ օգտագործելու հայեցակարգի վերաբերյալ, սակայն հստակ փաստված է, որ հափշտակության արդյունքում գույքային վնաս պետք է պատճառվի սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողի⁴:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը վերաձևակերպել հետևյալ կերպով. **«Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը (հանցագործությունից տուժածը) զրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունից»:**

Իհարկե, հափշտակության ավարտման պահի վերաբերյալ անհրաժեշտ է առանձին և ծավալուն գիտական հետազոտություն, սակայն սույն հոդվածի շրջանակներում և քննարկվող համատեքստում նշված մոտեցումը ավելի համահունչ է իրավունքի զարգացման արդի միտումներին, բխում է վերականգնողական արդարադատության գաղափարից և կարող է էապես դուրսացնել հափշտակության տարբեր եղանակների որակման գործընթացը:

Հափշտակության հասկացության, հատկանիշների, դրա տարբեր եղանակներին բնորոշ որակյալ տեսակների քննարկման շրջանակներում հարկ է անդրադառնալ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

³ См. у **Третьяк М. И.** Определение момента окончания хищения предметов, имеющих особую ценность, и других преступлений в судебной практике. <https://cyberleninka.ru/article/n/opredelenie-momenta-okonchaniya-hischeniya-predmetov-imeyuschih-osobuyu-tsennost-i-drugih-prestupleniy-v-sudebnoy-praktike/viewer> (վերջին մուտք՝ 06.08.2024 թ.):

⁴ См. у, օրինակ, <https://cyberleninka.ru/article/n/moment-okonchaniya-hischeniya> (վերջին մուտք՝ 07.08.2024 թ.):

սահմանված բնակարանի հասկացությանը, որով նշվում է. «Բնակարան՝ շինությունը, կառույցը կամ դրանց մասը, որը նախատեսված է կամ օգտագործվում է բնակության համար, համապատասխանաբար դրանց հարող ծածկապատշգամբը, վերնասրահը, պատշգամբը, նկուղը կամ ձեղնահարկը կամ այլ շինությունը կամ կառույցը, որոնցից անարգել մուտք է առկա բնակության համար օգտագործվող կամ նախատեսված շինություն, կառույց կամ դրանց մաս, ինչպես նաև հյուրանոցային համարը, նավախցիկը, հիվանդասենյակը, գնացքի մեկուսացված ճամփորդախցիկը, գետային կամ ծովային նավը կամ այլ տրանսպորտային միջոցը, եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար»:

Պետք է փաստել, որ նշված հասկացությունը տարբերվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում զետեղված բնակարանի հասկացությունից, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի 56-րդ կետը սահմանում է. «Բնակարան՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության, հանգստի, գույք պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց մասնագիտական կամ այլ պահանջմունքները բավարարելու համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, ավտոտնակը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, դրանց այլ բաղկացուցիչ մասերը, համապատասխանաբար դրանց անմիջական հարող մասնավոր տարածքները, մասնավոր և ծառայողական տրանսպորտային միջոցը, ինչպես նաև աշխատասենյակը»:

Հատկապես խնդրահարույց են քրեական օրենսդրությամբ սահմանված «բնակարան» հասկացության մեջ ներառված այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ **«անարգել մուտք»** կամ **«եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար»**: Նշված բնորոշումները կարող են գործնականում խնդիրներ հարուցել: Մուտքի անարգել լինելու հանգամանքը տարամեկնաբանությունների տեղիք կարող է տալ այն դեպքերում, երբ, օրինակ, տեղադրված է դուռ, սակայն այն կողպված չէ, և հանցավորի համար բավական է ուղղակի սեղմել բռնակը, և այն կբացվի: Արդյո՞ք նշված գործողությունը կարող է դիտվել ֆիզիկական ուժի գործադրմամբ արգելքի հաղթահարում: Եթե այո, ստացվում է մի իրավիճակ, որ եթե դուռն ուղղակի փակ է (անգամ առանց կողպելու), ապա նշված տարածքը չի ընդգրկվում «բնակարան» հասկացության ծավալի ներքո, իսկ եթե նույն դուռը բաց է, ընդգրկվում է:

Բավականաչափ վիճահարույց է նաև «եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար» ձևակերպումը, որը թվում է հստակ և որոշակի, սակայն ի՞նչ պետք է հասկանալ «օգտագործվում են բնակության համար» բնորոշման ներքո, ո՞ր գործողությունների ամբողջությունն է, որ կարող է վկայել այդ մասին, ընդ որում՝ հանցավորը պետք է գիտակցի այդ

գործողությունների կատարումը, քանզի դա վերածվում է հանցակազմի պարտադիր հատկանիշի, և եթե դրանք չեն ընկալվում հանցավորի կողմից, չեն կարող մեղսագրվել վերջինիս: Օրինակ՝ հանցավորը տեսնում է, որ որևէ անձ ավտոմեքենան վարելու ընթացքում ինչ-որ բան է ուտում կամ խմում, արդյո՞ք սա բավարար է հետազայում այդ մեքենայից կատարված գողությունը քրեական օրենսգրքի հոդված 254-ի 3-րդ մասի 2-րդ կետով որակելու համար:

Կարծում եմ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերում նշված հասկացության տարբերությունները կարող են լրջագույն խնդիրներ առաջացնել իրավակիրառ գործունեության ընթացքում, և անհրաժեշտ է այս հասկացությունը սահմանել միասնական կամ նախատեսել օրենսգրքերից միայն մեկում՝ քրեական օրենսգրքում, սակայն զետեղելով այստեղ ներկայիս քրեական դատավարության օրենսգրքում նշված բնորոշումը, իսկ քրեական դատավարության օրենսդրության պարագայում հղում կկատարվի քրեական օրենսգրքի համապատասխան նորմին:

II. Հափշտակության եղանակների վերաբերյալ

Սույն հոդվածի հիմքում ընկած տրամաբանությունը չի ենթադրում հափշտակության առանձին եղանակների խորքային վերլուծություն, սակայն դրանցում առկա որոշակի խնդրահարույց տարրեր անհրաժեշտ է քննարկել: Քրեական օրենսգրքի հոդված 252-ը պատասխանատվություն է սահմանում ավազակության համար: Հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ավազակությունը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակությունը»: Նոր ձևակերպմամբ ավազակությունը նախատեսվել է նյութական հանցակազմով, ինչը միանշանակ ողջունելի է և լուծում է այս հանցատեսակի որակման բազմաթիվ իրավակիրառական խնդիրներ: Հարկ է նկատել, որ ավազակության հանցատեսակի որակյալ դրսևորումների շարքում չի նախատեսվել «անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով» ծանրացնող հանգամանքը, ինչը որոշակի առումով տարակուսանք է հարուցում, քանի որ նշված ծանրացնող հանգամանքը նախատեսվել է, օրինակ, շորթման հանցակազմում (258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Որպես հայեցակարգային մոտեցում ՀՀ քրեական նոր օրենսգրքի հիմքում դրվել էր առանձին հանցակազմ պարունակող արարքները որպես ծանրացնող հանգամանք նախատեսելու անթույլատրելիության սկզբունքը, ուր, սակայն, չի հաջողվել կենսագործել, և բազմաթիվ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել են առանձին հանցակազմ պարունակող արարքներ:

Այս դիտանկյունից առկա է քրեական օրենսգրքի թե՛ ընդհանուր և թե՛ հատուկ մասերի լրամշակման անհրաժեշտություն այն հաշվով, որ բացառվեն նման ծանրացնող հանգամանքները, և դրանց առկայության պարագայում ա-

որարքը որակվի հանցագործությունների համակցությամբ: Իսկ մինչև նշված փոփոխությունների իրականացումը և կենսագործումը, կարծում եմ, որ ավագակության հանցակազմում ևս պետք է նախատեսվի վերը քննարկվող ծանրացնող հանգամանքը, այլապես օրենսգրքի միասնական տրամաբանությունը խաթարվում է:

Քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Գողոպուտը՝ բացահայտ հափշտակությունը, երբ հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ»: **Վերլուծելով նշված ձևակերպումը՝ հարկ է արձանագրել, որ այն խիստ թերի է, ոչ իրավաչափ և ակնհայտորեն պարունակում է կրկնաբանություն:** Պետք է նշել, որ հանցագործությունների որակումը անձի կողմից կատարված արարքի և քրեական օրենքով նախատեսված հանցակազմի հատկանիշների միջև ճշգրիտ համապատասխանության հաստատումն ու իրավական ամրագրումն են⁵: Նշվածից ուղղակիորեն բխում է, որ հանցակազմի հատկանիշները պետք է գիտակցվեն հանցավորի կողմից և վերաբերելի չեն հասարակության այլ անդամներին, այսինքն՝ կրկնակի նշումը՝ «...հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ», որևէ առարկայական նշանակություն չունի, քանի որ բացահայտության հատկանիշը վերաբերելի է հենց հանցավորի սուբյեկտիվ ընկալմանը և չի կարող պրոյեկտվել այլոց նկատմամբ: Այն հիմնավորումը, որ «...այլ անձինք կարող են կարծել, որ իրականում հափշտակություն տեղի չի ունենում, անձը, օրինակ, վերցրել է իր գույքը կամ խանութից կատարել է առևտուր, սակայն կարևորն այն է, թե ինչպես է իրավիճակն ընկալվում հանցանք կատարած անձի կողմից: Եթե վերջինս գիտակցում է կատարված հափշտակության բացահայտ լինելը, ապա այն պետք է որակվի որպես կողոպուտ, անկախ նրանից՝ իրականում կատարվածը գաղտնի է եղել, թե բացահայտ»⁶, չի կարող համարվել անառարկելի, քանի որ, ինչպես նշվեց, դա ինքնին ենթադրելի է, և օրենքի համատեքստում կրկին նշելու անհրաժեշտությունը բացակայում է: Վերոշարադրյալից ելնելով՝ առաջարկում եմ քրեական օրենսգրքի հոդված 253-ի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ բովանդակությամբ. **«Գողոպուտը՝ բացահայտ հափշտակությունը»:** Այս ձևակերպումը համահունչ կլինի նաև գողության հանցակազմի օրենսդրական նկարագրությանը, քանի որ քրեական օրենսգրքի հոդված 254-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը»: Այլապես այս դեպքում էլ պետք է նշվեր. «Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը, երբ հանցավորը գիտակցել է, որ գործում է գաղտնի»: Նշվածն ապացուցում է, որ օրենսգրքի հավելյալ ծանրաբեռնումը կրկնաբանություններով հղի է ամենաան-

⁵ Տե՛ս **Каранович М. К.** Квалификация преступлений: понятие, особенности и проблемы. Законность и правопорядок в современном обществе, М., 2014, էջ 161:

⁶ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, էջ 323:

ցանկալի հետևանքներով ոչ միայն տեսական, այլև գործնական, իրավակիրառական մակարդակներում:

Քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես գողության ծանրացնող հանգամանք նշվել է. «...տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից»: Այս ձևակերպումը «**Օբյեկտից**» եզրույթի մասով, խիստ թերի է, այն կարող է առաջ բերել բազմաթիվ տարամեկնաբանություններ և անհստակություններ: *Այս համատեքստում, կարծում եմ, նշված նորմն անհրաժեշտ է լրամշակել, նշելով՝ «տուժողի մոտ գտնվող այլ առարկայից» ձևակերպումը: Նույնը վերաբերելի է «այլ պահոց» հասկացությանը, քանզի պետք է շեշտել, որ այդ պահոցը գտնվում է անմիջապես տուժողի մոտ, ամրացված է նրա մարմնին կամ հագուստին, այլապես նշված ձևակերպումները կարող են էական խնդիրներ առաջացնել հանցագործությունների որակման գործընթացում:*

Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը...»:

Ձերմ մնալով խարդախության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների քննարկումից (Լիա Ավետիսյանի⁷, Աշոտ Սուքիասյանի⁸ վերաբերյալ գործերով և այլն)՝ հարկ է նկատել, որ օրենսդրական նոր բնորոշումը չի լուծում խարդախության և վստահված գույքը հափշտակելու հանցակազմերի, ինչպես նաև խարդախության հանցատեսակի և իրենց բնույթով քաղաքացիաիրավական հարաբերությունների հստակ տարանջատման խնդիրները, որպիսի պարագայում նշված բնորոշումը չի կարող հաջողված համարվել: Այստեղ հույժ կարևոր է «**նախնական դիտավորության**» կամ «**նախապես հափշտակություն կատարելու նպատակի**» վերաբերյալ նշումները, ինչն էապես կոյուրինացնի քննարկվող հանցագործության որակման գործընթացը: *Առաջարկում եմ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը վերաձևակերպել. «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է նախապես՝ մինչև հանցանքը սկսելը ...»:*

Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի առաջին մասը նախատեսում է. «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո...»: *Այս ձևակերպումը խսիտ թերի է և*

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Լիա Ավետիսյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշումը:

⁸ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Աշոտ Սուքիասյանի գործով 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ ԵԿԴ/0054/01/15 որոշումը:

կարող է հանգեցնել բազմաթիվ իրավակիրառական խնդիրների: Դրական հանգամանքները, որոնք կարելի է փաստել նշված ձևակերպման համատեքստում, այն են, որ առանձին չի նշվում յուրացնելու կամ վատնելու մասին, ինչպես նաև ներառում է հափշտակության դիտավորության ծագման պահը, ինչի մասին վերն արդեն խոսվել է:

Միննույն ժամանակ հարկ է նկատել, որ հոդվածում կիրառված որոշ ձևակերպումներ բավականաչափ խնդրահարույց են: Կիրառվել են ավելի շատ գեղարվեստական գրականությունից, հոգեբանության կամ փիլիսոփայության գիտություններից վերցրած եզրույթներ, քան քրեաիրավական որոշակի հասկացություններ: Տարակուսանք է առաջացնում «**փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով**» ձևակերպումը, որը հեռու է որոշակի լինելուց: Կամքի ազատության վերաբերյալ բազմաթիվ գիտական աշխատություններ կան⁹, սակայն այս եզրույթները որևէ քրեաիրավական մեկնաբանություն ունենալ չեն կարող: Հարկ է նկատել, որ ազատ կամքով որևէ արարք կատարելը երբևէ չի քննարկվել նաև հանցագործության սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշների համատեքստում, իսկ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը նկարագրելիս, երբ տեսական մակարդակով նշվում է «...գիտակցված և կամային վարքագծի ակտիվ կամ պասիվ դրսևորում...»¹⁰, ապա այս պարագայում ևս խոսքն ազատ կամքի մասին չէ, որը, ինչպես նշվեց, այլ գիտական ոլորտներին առնչվող հասկացություն է:

Այս առումով, պետք է փաստել, որ քննարկվող հոդվածն ունի խորքային լրամշակման կարիք, քանզի այս ձևակերպման պարագայում այն կարող է առաջացնել հասկացության շփոթ իրավակիրառ գործունեության ընթացքում՝ հանգեցնելով շահարկումների, տարամեկնաբանությունների և անհաստատության: Կարծում եմ՝ նշված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին, և այն պետք է վերաձևակերպել: Առաջարկում եմ հետևյալ տարբերակը. «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո...»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի վերաբերյալ գործով արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ¹¹, որոնք, կարծում եմ, այժմ ժամանակավրեպ են:

Նշված նախադեպային որոշումներն անհրաժեշտ է արմատապես վերանայել թե՛ հափշտակության նոր հասկացության և թե՛ այն նկատառումների

⁹ Տե՛ս, օրինակ, https://philosophy.ru/ru/free_will/, <https://arrenk.livejournal.com/2540.html>. և այլն:

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) /Ս. Առաքելյան, Ա. Գաբուլյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 132:

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սևակ Լսկավյանի գործով որոշման 12-12.3-րդ կետերը, Վճռաբեկ դատարանի՝ Արսեն Ավետիսյանի գործով 2022 թվականի ապրիլի 8-ի թիվ ԵԳԴ/0315/01/17 որոշումը:

համատեքստում, որ քաղաքացիաիրավական իրավահարաբերությունների առկայությունը առերևույթ «բացառում» է նշված հարաբերությունների մասնակցի կողմից հետազայում նշված գույքը հափշտակելու անգամ տեսական հնարավորությունը: Հարկ է նշել, որ քննարկվող նախադեպային որոշումներում բավականաչափ անհստակ է այն սահմանագիծը, թե երբ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարող են վերաճել քրեաիրավականի: Այս համատեքստում նոր նախադեպային որոշումներով անհրաժեշտ կլինի նշված սահմանային վիճակներն առավել հստակեցնելու և ընդգծելու:

Եզրակացություն

Մույն հետազոտության արդյունքում կատարված հիմնական եզրակացությունները հանգում են հետևյալին:

1. Օրենսդրական միասնական տրամաբանության ապահովման համատեքստում, կարծում եմ, հափշտակության հասկացության մեջ պետք է վերականգնվի շահադիտական դրդման վերաբերյալ նշումը, կամ ՀՀ քրեական օրենսգրքում ընդհանրապես պետք է հրաժարվել նշված դրդման վերաբերյալ զետեղումներից՝ թողնելով դա պատժի անհատականացման գործընթացի շրջանակներում:

2. Առաջարկում եմ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը (հանցագործությունից տուժածը) զրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունից»:

3. Նյութական և դատավարական իրավունքի նորմերում «բնակարան» հասկացության տարբերությունները կարող են խաթարել իրավակիրառ գործունեության ընթացքը, և անհրաժեշտ է այս հասկացությունը սահմանել միասնական կամ նախատեսել օրենսգրքերից միայն մեկում՝ քրեական օրենսգրքում, սակայն զետեղելով այստեղ ներկայիս քրեական դատավարության օրենսգրքում նշված բնորոշումը, իսկ քրեական դատավարության օրենսդրության պարագայում հղում կկատարվի քրեական օրենսգրքի համապատասխան նորմին:

4. Ավագակության հանցատեսակի որակյալ դրսևորումների շարքում չի նախատեսվել «անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով» ծանրացնող հանգամանքը, ինչը որոշակի առումով տարակուսանք է հարուցում, քանի որ նշված ծանրացնող հանգամանքը նախատեսվել է օրինակ, շորթման հանցակազմում (258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Որպես հայեցակարգային մոտեցում ՀՀ քրեական նոր օրենսգրքի հիմքում դրվել էր առանձին հանցակազմ պարունակող արարքները որպես ծանրաց-

նող հանգամանք նախատեսելու անթույլատրելիության սկզբունքը, որը, սակայն, չի հաջողվել կենսագործել, և բազմաթիվ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել են առանձին հանցակազմ պարունակող արարքներ: Այս դիտանկյունից առկա է քրեական օրենսգրքի թե՛ ընդհանուր և թե՛ հատուկ մասերի լրամշակման անհրաժեշտություն այն հաշվով, որ բացառվեն նման ծանրացնող հանգամանքները և դրանց առկայության պարագայում արարքը որակվի հանցագործությունների համակցությամբ: Իսկ մինչև նշված փոփոխությունների իրականացումը և կենսագործումը, կարծում եմ, որ ավագակության հանցակազմում ևս պետք է նախատեսվի վերը քննարկվող ծանրացնող հանգամանքը, այլապես օրենսգրքի միասնական տրամաբանությունը խաթարվում է:

5. Առաջարկում եմ քրեական օրենսգրքի հոդված 253-ի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Կողոպուտը՝ բացահայտ հափշտակությունը»: Այս ձևակերպումը համահունչ կլինի նաև գողության հանցակազմի օրենսդրական նկարագրությանը, քանի որ քրեական օրենսգրքի հոդված 254-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը»:

6. Քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես գողության ծանրացնող հանգամանք նշվել է՝ «...տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից»: Այս ձևակերպումը՝ «օբյեկտից» եզրույթի մասով, խիստ թերի է, այն կարող է առաջ բերել բազմաթիվ տարամեկնաբանություններ և անհստակություններ: Այս համատեքստում, կարծում եմ, նշված նորմն անհրաժեշտ է լրամշակել՝ նշելով «տուժողի մոտ գտնվող այլ առարկայից» ձևակերպումը: Նույնը վերաբերելի է «այլ պահոց» հասկացությանը, քանզի պետք է շեշտել, որ այդ պահոցը գտնվում է անմիջապես տուժողի մոտ, ամրացված է նրա մարմնին կամ հագուստին, այլապես՝ նշված ձևակերպումները կարող են ունենալ էական բացասական ազդեցություն հանցագործությունների որակման գործընթացի համատեքստում:

7. Առաջարկում եմ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը վերաձևակերպել. «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է նախապես՝ մինչև հանցանքը սկսելը»:

8. ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածն ունի խորքային լրամշակման կարիք, քանզի գործող ձևակերպման պարագայում այն կարող է արմատական խնդիրներ հարուցել պրակտիկայում՝ հանգեցնելով շահարկումների, տարամեկնաբանությունների և անհստակության: Կարծում եմ՝ նշված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին, հետևաբար այն պետք է վերաձևակերպել: Առաջարկում եմ հետևյալ խմբագրությունը. «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու

դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո»:

ТИГРАН СИМОНЯН – *Некоторые вопросы, связанные с понятием и способами хищения.* – Хищение составляет основное ядро преступлений против собственности, их центральный элемент. С этой точки зрения, изучение понятия и способов совершения данного преступления всегда актуально и важно. В рамках статьи исследованы некоторые проблемные вопросы, связанные с понятием хищения и его способами, предусмотренными новым (действующим) Уголовным кодексом Республики Армения. Эти вопросы являются достаточно проблематичными, и их разъяснение, а также предложения по дальнейшему законодательному совершенствованию актуально и необходимо.

Цель статьи – исследование существующих проблем законодательного оформления понятия хищения, момента его окончания, а также способов совершения хищения, и в результате представления предложения по совершенствованию законодательных формулировок, требующих немедленного решения.

В статье по отдельным параграфам рассматривается понятие хищения, некоторые особенности его дефиниций, а также проблемы законодательных формулировок и квалификации способов хищения. Объект исследования изучен с использованием как общенаучных, так и специальных методов, таких как догматический, сравнительно-правовой и логический анализ.

По результатам проведенного исследования представлены законодательные предложения по формулировке понятия хищения и способов его совершения, направленные на совершенствование уголовно-правовых норм, в частности:

- в контексте обеспечения единой законодательной логики, в понятие хищения следует вернуть указание на корыстные мотивы или полностью отказаться от упоминания данных мотивов в Уголовном кодексе Республики Армения;
- предлагается считать хищение оконченным с момента, когда собственник или законный владелец имущества утратил реальную возможность распоряжаться или пользоваться данным имуществом;
- различия в понимании понятия «жилище» в нормах материального и процессуального права создают проблемы для правоприменительной практики, поэтому необходимо предусмотреть это понятие только в Уголовном кодексе, внося соответствующие поправки;
- в существующих правовых регулированиях следует предусмотреть среди квалифицированных проявлений разбоя отягчающее обстоятельство «по неосторожности повлекшее смерть человека или причинение тяжкого вреда здоровью»;
- для избежания повторов следует изменить законодательную формулировку грабежа, указав: «Грабеж – открытое хищение» ;
- в одном из квалифицированных видов состава кражи термин «из объекта» является крайне проблематичным, что может вызвать множество разночтений и неясностей. В этом контексте указанную норму следует уточнить, указав: «из другого предмета, находящегося у потерпевшего», подчеркнув, что предмет находится непосредственно при потерпевшем, прикреплено к его телу или одежде;
- часть 1 статьи 255 Уголовного кодекса следует переформулировать, указав: «Мошенничество – хищение имущества путем обмана или злоупотребления доверием, если умысел на хищение данного имущества возник заранее, до начала преступления»;
- статью 256 Уголовного кодекса также следует отредактировать, указав: «Хищение имущества, доверенного преступнику, то есть переданного в его распоряжение, владение или использование, если умысел на хищение данного имущества возник после его получения на законных основаниях». Из существующего понятия следует исключить крайне спорную формулировку «по фактической или юридически свободной волею».

Ключевые слова: хищение, понятие хищения, окончание хищения, корыстный мотив, способы хищения, жилище, свободная воля, гармонизация материальных и процессуальных формулировок

TIGRAN SIMONYAN – *Some Issues Related to the Concept and Methods of Theft.* – Theft is at the core of property crimes; it is their central element. From this perspective, studying the concept and methods of committing this crime is always relevant and important. This article examines some problematic issues related to the concept of theft and its methods as defined by the new (current) Criminal Code of the Republic of Armenia. These issues are quite problematic, and clarifying them, as well as proposing further legislative improvements, is both relevant and necessary.

The purpose of the article is to investigate the existing problems with the legislative definition of theft, its completion, and the methods of committing theft, and to provide proposals for improving legislative formulations that require immediate resolution.

The article discusses, in separate paragraphs, the concept of theft, some peculiarities of its definitions, as well as problems with legislative formulations and the qualification of methods of theft. The object of the study was examined using both general scientific and specialized methods, such as dogmatic, comparative-legal, and logical analysis.

As a result of the research, legislative proposals are presented for the formulation of the concept of theft and methods of committing it, aimed at improving criminal law norms, specifically:

- In the context of ensuring a unified legislative logic, the concept of theft should either be revised to include references to mercenary motives or completely abandon mentions of these motives in the Criminal Code of the Republic of Armenia.
- It is proposed that theft be considered complete when the owner or legal possessor of the property loses the actual ability to dispose of or use the property.
- Differences in the understanding of the concept of "dwelling" in substantive and procedural law create issues for law enforcement practice, so this concept should be defined solely in the Criminal Code, with the necessary amendments.
- Existing legal regulations should include among the qualified acts of robbery (brigandage) an aggravating circumstance of "negligence resulting in the death of a person or causing serious harm to health."
- To avoid repetitions, the legislative formulation of robbery should be changed to: "Robbery – open theft."
- In one of the qualified types of theft, the term "from the object" is highly problematic, potentially leading to many interpretations and ambiguities. In this context, the norm should be clarified to state: "from another item held by the victim," emphasizing that the item is directly with the victim, attached to their body or clothing.
- Part 1 of Article 255 of the Criminal Code should be rephrased to state: "Fraud – Theft of property through deceit or abuse of trust, if the intent to steal the property arose beforehand, before the crime began."
- Article 256 of the Criminal Code should also be edited to read: "Theft of property entrusted to the perpetrator, that is, transferred to their disposal, possession, or use, if the intent to steal the property arose after it was received lawfully." The extremely controversial formulation "by actual or legally free will" should be excluded from the existing concept.

Key words: theft, concept of theft, completion of theft, mercenary motive, methods of theft, dwelling, free will, harmonization of substantive and procedural formulations